

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

3 հունիսի 2014 թ.

N 47/105-Ա

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆԻ ՃԱՐՏԱՐ ԵՎ ՂՈՒԶԵ
ՃԱՐՏԱՐ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՀԱՆՐԱՔՎԵՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ
ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունիսի 2-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջանի Ճարտար և Ղուգե Ճարտար համայնքներում տեղական հանրաքվեներ նշանակելու, անցկացնելու և հանրաքվեների նախապատրաստման ու անցկացման ծախսերը ֆինանսավորելու մասին» N 344-Ն որոշմանը, <Տեղական հանրաքվեի մասին> Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական օրենսգրքի դրույթներին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը **որոշում է.**

1. Հաստատել համայնքները մեկ՝ Ճարտար համայնքում միավորելու նպատակով 2014 թվականի հուլիսի 20-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջանի Ճարտար և Ղուգե Ճարտար համայնքներում անցկացվելիք տեղական հանրաքվեների՝

1) նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցը՝ համաձայն N 1 հավելվածի,

2) նախապատրաստման և անցկացման հետ կապված հանրաքվեների հանձնաժողովների ծախսերի նախահաշիվը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու տարածքային ընտրական հանձնաժողովին վերապահել տեղական հանրաքվեի տարածքային հանձնաժողովի լիազորությունները և հանձնարարել՝

1) աջակցել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունիսի 2-ի N 344-Ն որոշման՝ համապատասխան համայնքներում հանրային իրազեկման աշխատանքներին,

2) ապահովել սույն որոշման կատարումը սահմանված ժամկետներում՝ որոշման կատարման ընթացքի վերաբերյալ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովին պարբերաբար հաղորդելով համապատասխան տեղեկություններ:

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի գլխավոր հաշվապահին՝ տեղական հանրաքվեների նախապատրաստման ու անցկացման համար նախատեսված ծախսերն իրականացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեով նախատեսված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի միջոցների հաշվին:

4. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի քարտուղարին՝ ապահովել սույն որոշման՝

1) հանրային իրազեկման և շահագրգիռ պետական մարմիններին ու պատասխանատու կատարողներին առաքման կազմակերպական աշխատանքները,

2) կատարման վերահսկումը:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Ս.ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ